

քան հակասութիւն չկայ, որքան այդ երկու  
ուղղութեանց արտայայտութիւնների մէջ: Մէկը  
ներկայացնում է այդ յօրեյեանը մի լուսաւոր  
գործ, միւսը՝ խաւար, մէկը համարում է այդ  
համազգային, նոյնիսկ համաշխարհային կուլտու-  
րական ցոյց, միւսը ընդհակառակը—մի տեսակ  
անպատուութիւն, մէկը սպիտակ է ասում, միւսը  
սև: Բայց ո՞րն է ճիշտը, ո՞րն է լրջմիտ վերա-  
բերմունքի արդիւնք. իմ կարծիքով, ոչ այս և  
ոչ այն. «Մշակը» ունեցել է և ունի որոշ հա-  
տարակական արժէք, այդ պէտք է խոստովանել,  
ինչպէս և և չպէտք է մոռանալ, որ նա ունեցել  
է սխալ քայլեր, սխալ գնահատումներ:

Լրջութեան պակասն է դարձեալ, որ մի  
կողմին ստիպում է մոռանալ եղած գործը, իսկ  
միւսին՝ մեծացնել, ուսցնել այդ գործը չափից  
դուրս: Ինչու այդպիսի ծայրայեղութիւն ցոյց  
տալ. չէ՞ որ դրանից տուժում են երկուսն էլ.  
«Հորիզոնը» դառնում է այդպիսով նեղ, կու-  
տակցական թերթ, «Մշակն» էլ դառնում է  
ինքն իրեն գովող, իրեն մի ծառայութիւնը  
հարիւր համարող օրգան:

Pessimist

**Վեհ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՐԳԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ**

Դիւանի գրութեանը յայտնուեց Հայ տպա-  
գրութեան 400-ամեայ Յօրեյեանական Յանձնա-  
ժողովի Նորին Սրբազանն մայիս ամսոյ 7-ի նոյն  
Յանձնաժողովի յայտարարութեան վրայ արած  
հետեւեայ մակագրական—կարգադրութիւնը. «Ի  
նկատի ունենալով Յօրեյեանական Յանձնաժողովի  
և Գէորգեան Հոգևոր ձեմարանի Մանկավար-  
ժական Խորհրդի յայտնած կարծիքներն ու ցան-  
կութիւնները, կարգադրում և հաստատում ենք.

ա. Միացնել Հայ տպագրութեան 400-ամ-  
եայ յօրեյեանի հանդէսը տառերի դիւտի 1500-  
ամեակի հետ և կատարել այդ մեծ յօրեյեանն  
այս տարի հոկտեմբերի 13-ին ս. Թարգմանչաց  
տօնին:

բ. Հիմնել դպրոցական ֆօնդ մեր հոգևոր  
և եկեղեցական-ձխական դպրոցների բարդա-  
ւածման և բազմացման համար.

գ. ս. Էջմիածնի մատենադարանի կարևոր  
ձեռագիրները պարբերաբար հրատարակել.

դ. Մեծ յօրեյեանի առթիւ հրատարակել  
մի գիտական ժողովածու.

ե. Հրատարակել հանրամատչելի գրքոյի  
համաձայն Յօրեյեանական Յանձնաժողովի Գոր-  
արձանագրութեան Գորդ յօդուածի և ցրուել  
բոլոր դպրոցների աշակերտներին և ժողովրդին  
ձրի.

Դրել այս մտքով կոնդակներ Յանձնաժողո-  
վի և բոլոր առաջնորդների անունով, իսկ դպրո-  
ցական ֆօնդի ժողովարարութեան համար կոմ-  
կասի Տ. Փոխարքայից թոյլտուութիւն ստանա-  
լուց յետոյ: Տ մայիսի. [Թ. 344\*]:

«Արարատ»

**ԻՄ ՋՐՈՅՏՆԵՐԸ**

IV

Արդարութիւնը պիտի յաղթանակէ, ինչ ուզում է  
լինի, ինչ գնով ուզում է լինի, որտեղ ուզում է լինի:

Երբ մի ժողովրդի մէջ մեռնում է արդարութեան  
պահանջը, մեռնում է արդարասիրութեան զգացմանը,  
—նշանակում է, որ մեռնում է հէնց այդ ժողովուրդը, որ  
նա այլևս զրկում է ապրելու, վայելուչ ապրելու բա-  
րոյական իրաւունքից:

Երբ արդարասիրութիւնը մեռնում է իշխանաւորի  
մէջ,—նշանակում է, որ այդ իշխանաւորը բարոյական  
անանկութեան գիրկն է ընկած:

Ես չեմ ուզում հաւատալ, ես սարսափում եմ ան-  
գամ մտածելուց, որ Հայ ժողովրդի միջից չբացել անյայ-  
տացել է արգարութեան—արդարասիրութեան գաղափարը:  
Ես մի բայէ չեմ կարող հաշտուել այն վայրենի մտքի  
հետ, որ Հայ ժողովրդի դուրս անցած իշխանաւորները

\*) Արտատպելով «Արարատ» պաշտ. թերթի Մայիս-  
Յունիս միացրած № ից Ամենայն Հայոց Վեհ. Կաթո-  
ղիկոսի կարգադրութիւնն ու հաստատութիւնը հայոց  
տառերի գիւտի 1500-ամեայ և Հայ տպագրութեան 400-  
ամեայ համազգային յօրեյեանի առթիւ, մենք՝ առանց  
մանրամասնութիւնների ու խնդրի ոչ էական մասի բացա-  
տրութիւնների մէջ մանկու՛ գտնում ենք, որ ամենա-  
յարմար, յատանելի և հեղինակաւոր տօնախմբութեան  
կենդանատեղին Ս. Էջմիածինն է, այնտեղ պէտք է փա-  
ռաւորապէս կատարուի այդ համազգային տօնը և այն-  
էլ Վեհափառ Հայրապետի արած կարգադրութեան  
համաձայն տարևոյս Հոկտեմբերի 13-ին, Թարգմանչաց  
տօնին, որ դպրոցական տօն էլ է, և ոչ Նոյեմբերի 26-ին,  
որի մասին առաքիլում է թիֆլիզում կազմուած Յանձնա-  
ժողովը: Իսկ խորհրդաւոր է և Ազգային արժանապատու-  
թիւնն էլ այդ է պահանջում իսկ թէ ինչով յաւերժաց-  
նել այդ տօնը—գրական թէ դպրոցական ֆօնդ կազմելով  
—մենք առաւելութիւն ենք տալիս վերջինին:

ԽՍԸ.